



ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM
 بطريركية الأرمن في القدس
 PATRIARCAT ARMÉNIEN DE JÉRUSALEM

4 Յուլիս, 2000

Ազնուափայլ
 Օրիորդ Ազնիւ Սագուպեան
 Ստեփանապետոսի Սրբուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի
 Հիւսիսային Ամերիկայի Սանուց Միութեան
 Լուս Անճեթու

Սիրելի Օրիորդ Սագուպեան,

Գոհունակութեամբ տեղեկացանք, Նահապետ Մելիքեանին «Սաղէմի Խոնարհները» հաստորին հրատարակման առիթով, Իրանահայ Միութեան հետ գործակցաբար մեր Սանուց Միութեան առաջադրանքը՝ «Գինեձօն Նրեկոյթ» մը կազմակերպելու:


Կարդացիմք հաստորը: Ներկայացուած տիպարներուն եւ շրջապատին մօտէն ծանօթ լինելով հանդերձ, չէինք պակասցու մեր ընթերցումին վայելքէն: Նահապետին մտաւորականի շնորհը բացայայտ է: «Սաղէմի Խոնարհ» տիպերը աշխարհի ամէն կողմը կան: Անոնց զգացակից դառնալու, եւ զանոնք շրջապատող ընկերութեան անդամներուն թագմերես հոգեբանութեան, խոնարհ տիպարները ընկալելու մարդկայնութեան, եւ երբեմն «չարանիւնի անմարդկայնութեան», հարազատ պատկերացումը եւ վերապրումը, կը պահանջեն հոգեկան եւ իմացական ներհայեցողութիւն, որ գրողն ու գրուածքը կը տեղաւորեն որոշ պատուանդանի մը վրայ:

«Սաղէմի Խոնարհները» համամարդկային տիպարներ են:

Նահապետ Մելիքեանի վերլուծող ոգին եւ զգայնութիւնը, հարազատ ու կենդանի պատկերացումներով կը համադրէ շրջապատը եւ անոր մէջ երեւցող ընկերային եւ ազգային, մարդկային անհատական եւ հաւաքական ապրումներու համաճառագրը:

Արդար է ակնկալել, որ «Սաղէմի Խոնարհները» չմնան առանձնացած եւ առանձնատիպ, այլ դարպասը բանան հին աշխարհի մանրապատումներէն դէպի նոր ոլորտներ, մեր ժամանակներու հայ աշխարհի պատտաւին վրայ ուրաւագծելու համար թագմերանգ նոր տիպարներ:

Սաղիմաշունչ «խոնարհներու» անունով մաղթանք՝ որ Նահապետին գրիչը դալար եւ սիրտը բուխ մնայ միշտ, եւ կաթնադիրը նոր ներշնչումի, հոգեկան եւ իմացական վայելքներու:

Սիրոյ Ողջունի

 Թորգոմ Արք. Մանուկեան
 Հայ Պատրիարք Սրբուսաղէմի